



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 31840 .20 02 2017թ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԵՎ ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի 2016թ. դեկտեմբերի 23-ի որոշումը՝ ԵՊՀ կառուցվածքը հաստատելու մասին և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Երևանի պետական համալսարանի «Քիմիայի ֆակուլտետ» և «Ֆարմացիայի ինստիտուտ» կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման կապակցությամբ և ուսումնական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով Երևանի պետական համալսարանի ղեղազիտության և քիմիայի նախկին ֆակուլտետի ուսանողներին վերաբաշխել հետևյալ ձևով.

ա)Ուսումնառությունը շարունակելու նպատակով ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ տեղափոխել բակալավրիատի առկա ուսուցման «Քիմիա», «Կիրառական քիմիա», հեռակա ուսուցման «Էկոլոգիական քիմիա» մասնագիտությունների և «Անօրգանական և անալիտիկ քիմիա», «Ֆիզիկական քիմիա», «Օրգանական քիմիա», «Սննդի անվտանգություն» մագիստրոսական ծրագրերում ընդգրկված ուսանողներին:

բ)Ուսումնառությունը շարունակելու նպատակով ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտ տեղափոխել բակալավրիատի առկա ուսուցման «Ֆարմացիա», «Դեղագիտություն», հեռակա ուսուցման «Դեղագործական քիմիա» մասնագիտությունների և «Ֆարմացիա», «Դեղագիտություն» մագիստրոսական ծրագրերում ընդգրկված ուսանողներին:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկանին, Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին և ուսանողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ